Ընտանիքի Գործավորներ

2012թ.

Եթէ դուք ձեր տան մէջ աշխատելու համար գործի ընդունեք մէկին, օրինակ՝ մաքրության կին, խոհարար, պարտիզպան կամ երեխայի խնամող, դուք եւ ձեր գործավորը պէտք է իմանաք Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկեր վճարելու մասին:

Հնարավոր է որ մի օր ձեր ընտանիքի գործավորը Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի իրավասու լինի, եթէ նրա աշխատավարձից Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկեր պահեք, այդ հարկերը վճարեք Ներքին Հարկային Վարչության (IRS) եւ աշխատավարձերը տեղեկագրեք Սոցիալական Ապահովության Վարչության մօտ:

Երբ այդ աշխատավարձերը տեղեկագրեք եւ հարկերը վճարեք, ձեր գործավորը վարկ կստանա Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի նպաստների համար: Սա կընդգրկի կենսաթոշակ (ամենաշուտը 62 տարեկանին), հաշմանդամության եւ վերապրողների նպաստներ գործավորի եւ նրա ընտանիքի անդամների համար:

Ինչ աշխատավարձեր պետք է տեղեկագրվեն

Եթէ 2012 թվի ընթացքում ձեր ընտանիքի գործավորին վճարեք 1,800 դոլար կամ աւելի, պէտք է այդ գումարից հանեք Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկերը եւ տարին մէկ անգամ տեղեկագրեք աշխատավարձերը: Սա ընդգրկում է կանխիկ փողը, որը վճարում եք գործավորի երթեւեկության, ճաշերի եւ բնակարանի ծախսերի համար: Եթէ աշխատավարձերը ժամանակին չտեղեկագրեք, հնարավոր է որ տուգանք էլ վճարեք ուշացած հարկերի հետ:

Արդյո՞ք բոլոր ընտանիքի գործավորները նոյնն են

Երբ դուք ընտանիքի գործավորին մի տարվա ընթացքում վճարեք 1,800 դոլար կամ աւելի կանխիկ փող, աշխատավարձերը Սոցիալական Ապահովության մօտ պէտք է արձանագրեք: Սակայն, յատուկ օրէնքներ կան հետեւյալ պարագաներում:

Եթէ աշխատեցնում եք հիւրանոց, վարձու սենեակով բնակարան կամ գիշերօթիկ, գործավորներին լրիւ աշխատավարձերը պարտավոր եք տեղեկագրել, նոյնիսկ եթէ տարեկան գումարը 1,800 դոլարից պակաս է:

Դուք պարտավոր չեք Սոցիալական Ապահովության հարկեր վճարել ընտանիքի գործավորների համար, որոնք 18 տարեկանից երիտասարդ են (օրինակ՝ երեխայի խնամող), բացի այն դէպքում, երբ ընտանիքի համար աշխատելը գործավորի գլխավոր զբաղումն է:

Եթէ դուք աշխատանքի ընդունեք ձեր սեփական երեխաները ձեր տնային աշխատանքները կատարելու համար, դուք պարտավոր եք Սոցիալական Ապահովության հարկ վճարել իրենց աշխատավարձերի համար եթէ նրանք 21 տարեկան կամ աւելի մեծ են: Որոշ դեպքերում պարտավոր եք հարկ վճարել ձեր ծնողների կատարած ընտանեկան աշխատանքների համար:

Հավելյալ տեղեկության համար կապ հաստատեցեք ցանկացած Սոցիալական Ապահովության գրասենյակի հետ:

Աշխատավարձերը ինչպէ՞ս տեղեկագրել

Հարկերու արձանագրության մանրամասն տեղեկության համար կապ հաստատեցեք Ներքին Հարկային Վարչության հետ: Գրասենյակի պաշտոնյաները ձեզ կբացատրեն օրէնքը:

Հավելյալ տեղեկության համար դուր գալ տեսնել IRS Հրատարակության համար 926, *Household Employer's Tax Guide*, կամ այցելություն ***www.irs.gov/publications/p926/index.html***: Սակայն հետեւյալ տեղեկությունները պետք է իմանաք:

Տեղեկություններ պահել—Սոցիալական Ապահովության համար անհրաժեշտ են ընտանիքի գործավորների անունները, հասցեները եւ Սոցիալական Ապահովության համարները, ինչպէս նաեւ իրենց վաստակած աշխատավարձերի գումարը: Սոցիալական Ապահովության համարը ուղղակի արտագրեցեք իւրաքանչիւր անձի Սոցիալական Ապահովության քարտից: Եթէ ձեր գործավորներից մէկը Սոցիալական Ապահովության համար կամ քարտ չունի, պէտք է դիմի ցանկացած Սոցիալական Ապահովության գրասենյակում ստանալու համար նոր քարտ մը:

Պահումներ՝ սոցիալական ապահովության և Medicare-ի հարկերի տեսքով. 2012թ. սոցիալական ապահովության հարկի դրույքաչափն աշխատողների համար կազմում է 4.2 տոկոս՝ մինչև 110,000 դոլար տարեկան աշխատավարձի դեպքում: 2012թ. սոցիալական ապահովության հարկի դրույքաչափը 6.2 տոկոս է՝ մինչև 110,000 դոլար աշխատավարձի դեպքում: Medicare-ի հարկի դրույքաչափը 1.45 տոկոս է թե՛ գործատուների, թե՛ աշխատողների համար՝ անկախ աշխատավարձի չափից:

(շրջել)

Ձեր տեղեկագրի ներկայացումը—Ձեր անձնական հարկային հայտարարագիրով (IRS-ի 1040 թուղթը) ներկայացուցեք ձեր ընտանիքի գործավորին ձեր վճարած աշխատավարձը ավելի քան 1800 դոլարից: Որպէս գործատէր, դուք վճարում եք Սոցիալական Ապահովության եւ Մէտիքէրի հարկերի ձեր բաժինն ու ձեր գործավորի աշխատավարձից պահած հարկերը, ձեր հարկային հայտարարագրի ներկայացումով:

Տարին ավարտվելուց հետո W-2 ներկայացնելը—Աշխատավարձի վճարման տարին ավարտվելուց հետո՝ մինչև հունվարի 31-ը, Դուք պետք է նաև Ձեր տնային աշխատողներին տաք IRS-ի W-2 ձևի (Աշխատավարձի և հարկերի մասին հաշվետվություն) B, C ը 2 կրկնօրինակները: A կրկնօրինակն ուղարկեք Սոցիալական ապահովության վարչություն՝ մինչև փետրվարի վերջին օրը: Այս ձևն ու այն լրացնելու ցուցումները կարող եք ստանալ՝ դիմելով IRS-ի գրասենյակ, կամ եթե ունեք համակարգիչ, Համացանցից օգտվելու հնարավորություն և տպիչ սարք, ապա կարող եք օգտվել W-2 Online-ից: W-2 Online-ը Սոցիալական ապահովության վարչության կողմից գործատուներին տրամադրվող՝ էլեկտրոնային հաշվետվության անվճար տարբերակ է: W-2 Online-ի օգնությամբ Դուք կարող եք գտնել էլեկտրոնային W-2 ձևը, լրացնել այն և Համացանցով ներկայացնել Սոցիալական ապահովության վարչություն: Այս ծառայությունը նույնիսկ լրացնում է Ձեզ համար W-3 ձևը (հաշվետվության ուղարկման հաստատում): Դուք կարող եք նաև տպել հարկերի հայտարարագրեր ներկայացնելու համար Ձեր աշխատող(ներ) ին անհրաժեշտ կրկնօրինակները, ինչպես նաև կրկնօրինակներ՝ Ձեր սեփական հաշվառման համար:

Սկսելու համար պետք է գրանցվեք և ստանաք օգտագործողի ID և ծածկագիր: Դա կարող եք անել՝ այցելելով Business Services Online կայքէջը՝ ***www.socialsecurity.gov/bso/bsowelcome.htm***: Լրացուցիչ տեղեկությունների և քայլ առ քայլ ցուցումների համար այցելեք ***www.socialsecurity.gov/employer/bsohbnew.htm*** կայքէջը:

Ինչպես է ձեր ընտանիքի գործավորը վարկ վաստակում Սոցիալական Ապահովության համար

Ընտանիքի համար կատարված աշխատանքը տարբեր ձեւով վարկեվորվում է ուրիշ աշխատանքներից: Ընդհանրապէս, անձ մը մեկ վարկ շահում է իւրաքանչիւր 1,130 դոլարի փոխարեն (2012 թվին), առաւելագոյնը մինչեւ չորս վարկ մէկ տարվա մէջ: Բայց ընտանիքի համար աշխատող գործավոր մը Սոցիալական Ապահովության վարկ կը վաստակի միայն այն գործի համար ուր շահած է նվազագույնը 1,800 դոլար: Օրինակ, եթէ անձ մը աշխատած է երեք տարբեր ընտանիքների մօտ եւ շահած 900 դոլոր, 1,000 դոլար եւ 1,800 դոլոր իւրաքանչիւրից (ընդամէնը 3,700 դոլար), նա կստանա միայն մէկ Սոցիալական Ապահովության վարկ եւ 1,800 դոլար կարձանագրվի իր Սոցիալական Ապահովության ցուցակի վրայ:

Վարկերի քանակը որ անձ մը պէտք ունի (ներառյալ ընտանիքի գործավոր) իրավասու յինելու Սոցիալական Ապահովության նպաստների համար, կախյալ է նրա տարիքից եւ նպաստի տեսակից: Մեծ մասամբ անձ մը պէտք ունի 10 տարվա աշխատանք (40 վարկեր)՝ նպաստների իրավասու լինելու համար: Երիտասարդ անձ մը աւելի քիչ վարկերու պէտք ունի՝ հաշմանդամության նպաստների եւ վերապրողի նպաստների իրավասու լինելու համար:

Հիշեցեք՝ եթէ դուք ձեր գործավորի աշխատավարձերը չարձանագրեք, նրանք Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալու համար բավարար վարկ չեն ունենար, կամ հնարավոր է որ նրանց ապագայի նպաստներու գումարը նվազ լինի:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10021-AM
Household Workers (Armenian)
February 2012